ցույց տալիս և թե ծառայում վտանգի ազդարարմանը, երբ «Հավարե-լո-հավարե» ազդանշանով անցնում էր սարից-սար, գյուղից-գյուղ և ամենակարճ ժամկետում լուրը հասցնում բոլորին։

Դերսիմում ընդունված սովորություն էր, որ հավարը բարեկամություն, թշնամություն չէր ճանաչում։ Այն ստացող գյուղը կամ անհատը, եթե նույնիսկ թշնամի լիներ հաղորդողին, պարտավոր էր ճշգրտորեն և ամենաարագ կերպով ստացված լուրը հաղորդել հաջորդին։

Հավարը տրվում էր բարձր ժայռերի կատարից, չորս ուղղությամբ՝ դեպի արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ։ Տրված ուղղության վրա բնակչություն կար թե ոչ, խնդիր չէր, հավարը տրվում էր այն իմաստով, որ ոչ միայն գյուղերը, այլև անտառներում, սարերում, ճանապարհներին գտնրվող ամեն մեկը իմանար և իր կարգին փոխանցեր այն հաջորդին։

Հավարն ստացող գյուղն անմիջապես իր հավարատուներին[2] ուղարկում էր ճշտված տվյալներ և, նույն կարգով լուրը հաղորդում չորս ուղղությամբ։ Այդ ձևով տրված առաջին լուրը ալիքավորված թռչում էր ամեն ուղղությամբ և տարածվում ամեն շեն ու ավան։

Հավարատուն նախքան լուրի հաղորդումը, վստահ լինելու համար, թե իրեն լսողներ կան թե ոչ, նախ հավարատու[3] հատուկ հրացանով երեք անգամ կրակում էր օդի մեջ, ապա բղավում «հավարե-լո-հավարե»։ Լուրն ընդունողն իր կարգին կրակում էր օդի մեջ մի անգամ, որով հաղորդողը տեղեկանում էր, թե լուրը տեղ է հասել։ Պատահում էր, որ քամու ազդեցության հետևանքով հավարը տեղ չէր հասնում։ Նման դեպքերում գոռում էին մի քանի հոգի։

ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Դերսիմի տնայնագործությունը, արհեստն ու առևտուրը մեծ մասամբ գտնվում էին հայերի, մասամբ քրդերի (փայտամշակություն, կաշեգործություն, ջեջիմագործություն՝ հայերից հետո), իսկ աննշան չափով վարչական կենտրոններում բնակվող և բնակչության չնչին տոկոսը կազմող թուրքերի ձեռքին (պայտարություն, կյոնճիություն կամ ղապախություն, լեպլեպիճիություն, ազատարություն)։ Քրդերը թույլ չէին տալիս, որ թուրք արհեստավորները կամ մանրավաճառները, շրջուն փերեզակները (չարշի) մտնեն քրդական գյուղերը, հետևաբար, նրանք դատապարտված էին դուրս չգալու վարչական կենտրոններից։

Լեռնաշխարհի ինքնանկախ շրջանի գյուղերում առևտուրը գտնվում էր հայերի ձեռքին, որոնք ոչ միայն շրջկենտրոնները, այլև գյուղերը շրջելու և ժողովրդի պահանջները բավարարելու ամեն տեսակ հնարավորություն ունեին։ Հայ առևտրականը կամ արհեստավորը գյուղը շրջկենտրոններին միացնող շաղկապն էր։ Գյուղացիները քաղաքացիներին չէին սիրում, իսկ առևտուրը նկատում էին խաբեության միջոց։ Քրդերը թուրքերի հետ առևտուր չէին անում, վստահում էին հային և գյուղերում՝ թե շրջկենտրոններում կապվում հայ արհեստավորների ու առևտրականների հետ. Շրջկենտրոններում շատ վաճառականներ չկային, անապահովությունը և սպառման շուկայի սահմանափակ պահանջը ծնունդ էին տվել մանր առևտրի զարգացմանը։

Գյուղերում իրար հետ կամ դրսից եկող առևտրականների ու արհեստավորների հետ առևտուրը կատարվում էր փոխանակության կարգով, իսկ շրջկենտրոններում՝ մասամբ միայն դրամով։

Փոխանակության առանցքը ցորենն էր, արժեքները որոշվում էին ցորենով և ըստ այնմ գնահատվում կաթնեղենի, մորթիների, անասունների, կաշիների և տեղական այլ արտադրությունների արժեքը։

Բացի ցորենից, որպես փոխանակության միջոց ընդունված էին նաև բուրդը և յուղը։ Ցորենի կոտը միջին հաշվով արժեր թրքական դրամով 5 ղուրուշ։ Չորս կոտ ցորենով կարելի էր գնել մի լիռ յուղ, ուրեմն՝ յուղի լիտր՝ (6 հոխա) արժեր 20 ղուրուշ։ Ձվի տասը հատը արժեր տաս փարա, հետևաբար մի կոտ ցորենի արժեքը հավասար էր 200 ձվի կամ մի լիռ բուրդը 4 կոտ ցորեն, և փոխադարձաբար։

Ջարչիները մանուսան, չիթը, կտավը, աղը, բասման կամ դուքնին կրկնապատիկ և եռապատիկ գներով փոխանակում էին կարագի, մորթու, բրդի, մեղրի և այլ կենսամթերքների հետ, որոնք

վրա շարված քարերով փոքր աշտարակ էր՝ անցորդին ուղղություն տալու համար։ Դրանք գտնվում էին ճանապարհների խաչմերուկներում։

[2] Դերսիմցիք առհասարակ բարձրախոս էին, նրանք սովորական զրույցի ժամանակ իսկ խոսում էին գոռում-գոչումով, մարդ կարծում էր, թե կռվում են, իսկ հավարատուները շատ ուժեղ ձայն ունեցող մարդիկ էին։

[3] Հավարատու հրացանը լայնափող շեշխանե հրացան էր, որով կապար չէին արձակում, այլ լցնում էին առատ վառոդ, ապա լավ խցում այն և կրակում։ Դա բարձր ժայռերի մեջ թնդանոթի ձայն էր հանում։ Այդ զենքը գործածվում էր նաև ամուսնության ժամանակ, երբ աղջկա կուսությունն ավետում էին բնած գյուղին։

փոխադրում էին կենտրոնական քաղաքները և վաճառում սուղ դներով։ Քաղաքացու ապրանքը սուղ, իսկ գյուղացու ապրանքը էժան էին գնահատում, այն պարզ պատճառով, որ լեռնաշխարհի գյուղացիությունը զուրկ էր փոխադրական միջոցներից և վախենում էր կենտրոնական բաղարներ գնալուց։

Գլխավոր կենտրոնների վաճառականները զրամատիրական երկրների համապատասխան հաստատություններից երեք կամ վեց ամսվա պայմանաժամանակով ապրանքներ էին ստանում վարկով, 100-ին 5 տոկոս շահույթով։ Նույն ապրանքներն ուղարկում էին դավառական կենտրոնական բաղարների վաճառականներին, նրանք էլ իրենց հերթին 3 ամիս վարկային պայմանաժամով, հաշված փոխադրության ծախսը և 5 տոկոս իր շահարժին, ապրանքը բաժանում էին մանր առևտրականներին։ Մանրածախ առևտրականը 10 տոկոս շահույթով ապրանքը ծախում էր կանխիկ զրամով, ուրեմն մինչև կենտրոնական բաղարների մանրավաճառների սպառման շուկան, ապրանքների գները բարձրանում էին, անկախ ճանապարհածախսից, 20 տոկոսով։ Իսկ մանրավաճառ շարքին ապրանքը մինչև գյուղի գնորդի հետ փոխանակելը դիմը կրկնապատկում և եռապատկում էր, այսինքն՝ կենտրոնական բաղարի մանրավաճառից գնված մի արշին կտավի փոխարժեքը բաղարում եթե մեկ զուրուշ էր (40 փարա), լեռնաշխարհի գյուղացուն փոխանակության կարգով ծախվում էր 3—4 զուրուշով, իսկ գյուղացուց ստացած հումքը, որը հաշվվում էր 5 արշին կտավը՝ մի լիռ բուրդ կամ նույնքան յուղ, կենտրոնական քաղաքում ծախում էր բրդի լիռը նվազագույնը 50 զուրուշով։ Եթե հաշվենք մի արշին կտավի փոխարժեքը 1 զուրուշ, 5 արշին կտավի համար 5 զուրուշ վճարող շարշին փոխանակության կարգով ստացած հումքից վաստակում էր 50 զուրուշ։ Հիշենք նաև այն, որ շարշին բաղարում կտավը կամ լիթը յառտայով է գնել (0,75 մ) և գյուղում վաճառում է արշինով (0,63 մ)։ Ավելորդ է խոսել նաև այն մասին, որ չափելիս կտորը պրկելով, զողանում էր նաև այդտեղից։

Գյուղից գյուղ թափառող շարշիները բեռնատար էշ, ջորի կամ ձի ունեին, քաղաքից զուրս գալուց հետո իջևանած ամեն գյուղում հյուրասիրում և կերակրում էին թե ծախողներին և թե նրանց կենդանիներին, որովհետև քիվրան (այդպես են բոլոր շարշիները, այլապես չէին կարող մտնել լեռնաշխարհի սահմաններից ներս) քաղաքից նվեր էր բերում գյուղի իր քիվրայի կնոջը, աղջկան կամ հարսին՝ մի-մի կրծկալ կամ հինտի (յաղմտ) և կամ չերեզ (լեպլեպի, չամիչ)։

Ավելի հստակ պատկերացնելու համար առևտրի կամ փոխանակության ժամանակ որպես վճարման հիմք ծառայող ապրանքների գնահատման և արժեքի բնութագիրը, անհրաժեշտ է տալ մի շարք ծանոթություններ որպես միավոր օգտագործվող կոտի, լիռի և զրամի չափանիշների մասին։

Ասվեց, որ փոխանակության ժամանակ գործածական մի կոտ ցորենը, մի լիռ բուրդը կամ 40 փարան գնման արժեքը բնորոշող չափանիշներ էին։ Միավորի դեր կատարողը կոտը, լիռը և 40 փարան էին, բայց իրականության մեջ ամեն մեկն ուներ իր ստորաբաժանումը և բնորոշիչ միավորը։ Այսպես, մի կոտ ցորենը արժեր 5 զուրուշ։ Կոտը, որ ընդունված էր որպես միավոր արմտիքի չափումների համար, հավասար էր թրքական 12 հոխայի կամ 16 կգ-ի, ուրեմն՝ ցորենի 16 կգ-ը արժեր 5 զուրուշ։ Լիռը հավասար էր թրքական 6 հոխայի կամ 8 կգ-ի, իսկ 40 փարան թրքական մի զուրուշն էր։ Թեև զուրուշի ստորաբաժանման միավորը փարան էր և 40 փարան արժեր մի զուրուշ, նույնպես և կգ-ի ստորաբաժանման միավորը ոչ թե հոխան էր, այլ դիրհեմը և 400 դիրհեմը մի հոխա էր, բայց այստեղ որպես միավոր նկատի է առնվում կոտը և նրա ստորաբաժանումը՝ հոխան, 12 հոխա ցորենը արժեր 5 զուրուշ, մի լիռ 6 հոխա բուրդը արժեր 20 զուրուշ և մի արշին կտավ՝ մի զուրուշ։

Թրքական դրամական սիստեմի հիմքը փարան էր, իսկ ռուսականինը՝ կոպեկը։

Թրքական դրամական սիստեմում 100 փարան երկուսուկես զուրուշ էր, մինչդեռ ռուսական 100 կոպեկը՝ մի ռուբլի։ Այստեղ էր, որ երկու դրամների աստիճանական բաժանումները տարբերվում էին՝ 40 փարան արժեր 1 զուրուշ, 80 փարան՝ 2 զուրուշ, 100-ը՝ 2,5 զուրուշ, 200-ը՝ 5 զուրուշ (բառորդ մեճիտ կամ 2 չերեկ), 800-ը՝ 20 զուրուշ (մեկ մեճիտ)։

Նկատի ունենալով, որ թրքական ոսկին հավասար էր 100 արծաթ զուրուշի, հետևաբար 5 մեճիտը հավասար էր 5×20—100 զուրուշի կամ մեկ թրքական լիրայի (ոսկի)։ Ոսկի դրամն էլ ուներ իր ստորաբաժանումները՝ քառորդ ոսկին արժեր 25 արծաթ զուրուշ, կես ոսկին հավասար էր 50 արծաթ զուրուշի կամ 4 քառորդ ոսկին= 1 լիրայի, 2 բառորդ ոսկին՝ կես լիրայի, երկու կես ոսկին՝ մեկ լիրայի։

Դրամական արժեքի համեմատության կարգով, թվական հաշվարկումները ցույց են տալիս, որ ռուսական 1 կոպեկը արժեր թրքական 5 փարա, ուրեմն՝ 8 կոպեկի արժեքը հավասար էր թրքական 40 փարային կամ այն միավորող արծաթ—դրամ 1 ղուրուշին։ 40 կոպեկը=5 ղուրուշի (թրքական մի քառորդ մեճիտի), 80 կոպեկը—10 ղուրուշի (թրքական կես մեճիտի)։ Նկատի ունենալով, որ 100 կոպեկը համազոր էր 1 ռուբլու, հետևաբար 1 ռուբլին հավասար էր 100×5=500 փարայի կամ 12,5 թրքական ղուրուշի։ Երկու ռուբլին արժեր 25 ղուրուշ կամ թրքական մի քառորդ ոսկի, չորս ռուբլին արժեր 50 ղուրուշ կամ թրքական կես ոսկի, ութ ռուբլին արժեր 100 ղուրուշ կամ թրքական մեկ ոսկի։

Այս համեմատությամբ ռուսական 10 ռուբլիանոց չերվոնեցը արժեր թրքական 125 ղուրուշ կամ մեկ լիրա ու մեկ քառորդ ոսկի։

Լեռնաշխարհում առևտուրը թեև կատարվում էր առավելապես փոխանակությամբ, բայց հիմնականում գործող միջոցը դրամական արժեքն էր, որը շրջանառության էր հանված ոսկի և արծաթ դրամանիշներով։ Լեռնաշխարհի ժողովուրդը թղթադրամի մասին գաղափար չուներ. ընդունելի և գործածական միակ դրամը ոսկին և արծաթն էր։

Զարչիների չարաշահություններից ավելի մեծ և աղետալի չարաշահությունը վաշխառուների կողոպուտն էր։

Դերսիմի հայ և քուրդ բնակչությունը ներքին կարգով իրար միջև կատարված փոխառության



Նկ. 19. Թուրքական ոսկե դրամներ։ Ա.—1. .ինգոսկինոց, 2. բոմիժ, 3. լիրա, 4. կես ոսկի, 5. քառորդ ոսկի, Բ.—Զարգոսկիներ—1. ղպի, 2. մահմուտիե, Գ.—1. մեճիտ (քսան ղուրուշ), 2. կես մեճիտ (տասը ղուրուշ), 3. քառորդ մեճիա (չեյրեկ. հինգ ղուրուշ), 4. ուրսուն փարա (երկու ղուրուշ), 5. քառասուն փարա (մեկ ղուրուշ), Դ.—փենեզ (ոսկեղույն թիթեղից ղարդ), Ե.—1. 100 փարա (2,5 ղուրուշ), 2. 50 փարա (1,25 ղուրուշ), 3. 10 փարա (0,5 ղուրուշ), 4. հինգ փարա։

դիմաց տոկոսներ չէր վերցնում։ Տոկոսով դրամ տալը մեղք և անպատվարեր էր համարվում, նույնիսկ արված փոխառության դիմաց մուրհակ (սենեք) կամ փոխգիր չէին առնում և ոչ էլ երաշխավորներ պահանջում։ Դրամը տալիս էին գաղտնի, առանց ստորագրության և վկաների մասնակցության՝ «այ ձեռքի ավածը ձախը չիմանա»։

Տոկոսով դրամ տվող վաշխառուները (փոլիցայի) գտնվում էին կենտրոնական բազարներում, իսկ Դերսիմի վաշխառուները շրջկենտրոններում էին և վայելում էին այսինչ աղայի կամ բռնակալի հովանավորությունը, որովհետև վաշխառուն օգտվում էր աղայի և բեկի դրամագլխից՝ ի հաշիվ իրեն և իր տիրոջ։ Կոդոպանելով աշխատավորին։

Քուրդ դրամատեր աղան կամ բեկն ինքն անձամբ գյուղացիներից տոկոս չէր վերցնում, դա ամոթանքի և ընդվզումի տեղիք կտար, բայց անուղղակի կերպով իր պաշտպանության տակ առնելով որևէ վաշխառուի, նրա միջոցով կատարում էր կալվածների գնումներ։

Վաշխառուն մինչև իր գրասենյակներում սեղմելը հյուրասեր էր, բարեսիրտ, աստվածավախ և բարյացակամ։ Ադբատ գյուղացին հարստանիքի, ուկրաինյան, Բալատումի-Ֆյուսենեք-այուկյունի) և կամ այլ պարագաների հարկադրանքի տակ, թեև ինքն ուներ հաց, կարագ, պանիր, մսացու, մեղր կամ այլ սննդամթերք, օրվա տոնակատարությունը դիմավորելու համար ավելորդ ապրանք չուներ ծախելու կամ փոխանակության կարողով հագուստեղեն, զարդեղեն կամ շերեղ ձեռք բերելու և ահա դիմում էր շրջկենտրոնի իր ծանոթ առևտրականին։

— Գիտես, աղա, ինչո՞ւ եմ եկել քեզ մոտ։

— Բարով, հազար բարով, աչքիս-ղլխիս վրա գոնախ ես եկել, ասա տեսնեմ, ինչ է ցավը։

— Տղաս կարդելու համար մի քիչ շուլ ու չափուքի պետք ունեմ, ֆախաթ փարա չունեմ, դու ինչ կասես քո գործին։

— Ամուսնությունը պապենական ավանդությամբ սուրբ գործ է, ամեն մարդ պարտավոր է օգնել դավակ կարգողին, տուն շինողին, կնունք կամ սյունեք անողին։ Ասա տեսնեմ, ինչքան ապրանքի և դրամի պետք ունես, մի քաշվիր, խանութս քուկդ է։

— Հայ դու սաղ ըլլաս, արևդ կանչնա, հոգ բոնես ոսկի դառնա, բերան չէ, խորան է։

Եվ առանց սակարկության գործարքը վերջացնում էին, խանութպանը իր կողմից նվերներ էր տալիս ամուսնացողներին, իր տանը հյուրասիրում, մեծարում և մի որոշ գումար տալուց հետո, խոսքը ուղղելով պարտականին, ասում էր.

— Գիտես ինչ, մենք բոլորս էլ մահկանացու ենք, ինչ կլլա, ինչ չլլար, լավ է, որ սենեք մը գրենք և դու կնրես (մեհյուրել)։ Աստված չնե, որ ես կասկածիմ քո բարեխղճության, բայց բոլորս էլ հոգեղեն արարած ենք, այսօր կանք, վաղը չկանք։

— Այդ ինչ խոսք է, աղա, հելպեք, հելպեք, դու սենեքը գրե, ես կմեհյուրեմ, դառնով օշխարհ մեն ալ նվեր կբերեմ։

Եթե արված ապրանքն իրատես արժեր 4 ոսկի, խանութպանն իր պերճախոսությամբ, ապրանքի սրակի գովքով և «Միայն քեզի համար է, օր ըս գներով ըս տեսակ լավ ապրանք կուտամ կը» ավելացնելով, գումարը հասցնում էր 8 ոսկու և ավելացնում.

— Ըս էրկու օսկին ալ մառուր-մրռուր բանմտն առնելու կուտամ կը, օր չնեղվես, խալխին էռչև ամոթով չլնիս։

Եվ «Աստված մեկդ հազար բնես» օրհնանքով գնորդը ստորագրում էր երեք ամսվա պայմանաժամով՝ առանց տոկոսի 10 ոսկիանոց մուրհակը։

Գնորդի այն հարցին, թե ինչու վրադիր բան մը ավելի չդրեցիր՝

— Աստված չանե, օր ես հարամ փարա ուտեմ, գնա բանիդ նայե, տերը քեզ օգնական,— պատասխանելով տաս ոսկիանոց մուրհակը գրրպանում էր և ճանապարհ գնում հյուրին։

Գյուղացին ուրախ ու գոհ վերադառնում էր գյուղ, այն հավատով, որ խանութպանը իրեն կոնակ է կանգնել ու հույսով, որ դարնանը, երբ անասունների ծինը վերջանա և ձյունը վերանա, մի քանի անասուն (ձի, ոչխար կամ կով) ծախելով, կկարողանա իր բարերարի պարտքը վճարել։

Բայց պատահում էր, որ շուկայի հաշիվը տան հաշվին չէր համապատասխանում, անասունների մի մասը սատկում էր կամ այլ դժբախտություններ հետևանքով պարտատերը հնարավորություն չէր ունենում իր պարտքը վճարել և մի օր խոստացված նոր ծնված մաքին իր դառով առաջն արած, դլխիկոր և մտածկոտ կանգ էր առնում իր «բարերարի» տան առջև։

Խանութպանը, որ վստահորեն սպասում էր այս այցելությանը, փոխանակ սրտմտելու, երես դարձնելու, ընդհակառակը, լսելուց հետո պարտականի ինքնարդարացման պատճառաբանությունները, սիրալիր կերպով հյուրասիրում էր նրան ու քաջալերում.

— Դու օղջ էղիր, տղաքդ օղջ ըլնին, ըս ալ

ման է, օր վերվելն անես կր, բեր սեռեթյ փոխեռեր, 91 օր հետո ասուված սգորման է։

— Օգորմի հոգուդ։

Այստեղ էր, որ խանութպանը մտնում էր իր դերի մեջ և դառնում վաշխառու։ Ըստ ընդունված կարգի և պետական օրենքի, մի ոսկու երեք ամսրվա տոկոսը մի մեճիտ էր, հետևաբար 10 ոսկիանոց փոխառության մուրհակը դառնում էր 10 ոսկի և 10 մեճիտ՝ վճարելի 91 օրից (առքսան պիր կյուն), և այստեղից սկսվում էր պարտապանի ողբերգությունը, իսկ պարտատիրոջ՝ խրախճանքը։

Վաշխառությունը Թուրքիայում պետական սիստեմ էր և վաշխառուն գանվում էր պետական պաշտպանության ներքո։

Մի օր Դերսիմում շրջագայությանս ժամանակ Ղրգրլքիլիսեի շրջանում, Փախ գյուղի մոտերքում հյուր եղա քրդական դոմերում, ուր ապրում էր խաշնարածությամբ զբաղվող հովվական հինգ ընտանիք, որոնց հետ վաղուց ծանոթներ էինք։ Այդ նույն ընտանիքում, ինձ համար բոլորովին անսպասելի, հանդիպեցի համադյուղացի Տեփան էմուն (ամի), իր կնոջը՝ Զարմանին, հարսին՝ Ծաղիկին և 12 տարեկան թոռանը՝ Տիդրանին։

Մոտից ծանոթ էի այս ընտանիքի ողբերգական վիճակին, բայց երկար տարիներ չէի տեսել իրենց։ Գիտեի, որ Տեփան էմին ազատվելու համար վաշխառուի հալածանքներից ընտանյոք փախել էր գյուղից և հետքը կորցրել, բայց չէի սպասում, որ հալածական այս ընտանիքին հանդիպելու եմ Դերսիմում, այն էլ հովվական քուրդ ընտանիքում։

Ճիշտ է, տարիներ առաջ այժմ մեզ հյուրընկալող հովիվ Զեյնալը սպանություն կատարելով, մեր գյուղն էր ապաստանել և գյուղի հայ ու քուրդ բնակչության պաշտպանության տակ երեք տարի հովվություն էր արել, մինչև որ կարելիություն ստեղծվեց հաշտեցնել իր թշնամու հետ և ընտանյոք վերադարձնել այժմյան դոմերը, բայց այդ բոլորը չէի կարող հաշտեցնել Տեփան էմու թշվառ ընտանիքի հովվական այս հարկի տակ գտնվելու հետ։

Վաշխառուների հազարավոր զոհերից գոնե մեկի իրական վիճակը պատկերացնելով, ուված կլինենք ընդհանուր մի պատկեր իր ողբերգական փուլերով։

Սգոյնց Տեփանը (Ստեփան) ապրում էր Պալապանի լեռնաշխարհի Խնձորեկ գյուղում, որը գտնվում էր Կյուլապի-ղատե Խալիլ աղայի տիրապետության տակ։ Խալիլ աղան երկար տարիների պայքարից հետո ստիպվել էր խաղաղ ապրել հայ և քուրդ դրացիների հետ և սակայն այն, ինչ չէր կարող ձեռք բերել բռնի ուժով, անուղղակի կերպով ձեռք էր բերում վաշխառուների միջոցով, և այդ նպատակով քաղաքից գյուղ էր բերել տվել մի շարքի խանութպան, Ազաբլարենց Օհաննես անունով, որը հաստատվելով աղայի կողմից կառուցված և աղայի զոնախին (ապարանք) շատ մոտիկ իր նոր բնակարանում, սկսեց առևտուր անել մի շարք քրդական գյուղերի հետ։

Աղայի անմիջական պաշտպանությունը վայելող միջահասակ, կապույտ աչքերով, երկար մազերով, բաղաքացիական տարազով այս մարդը շատ խորամանկ, հնարագետ, լեղվանի և քիչ թե շատ դաստիարակված էր։ Նա կարողացավ կարճ ժամանակամիջոցում հարստության, դիրքի և անունի տեր դառնալ և ինքզինքը հարգել տալ գյուղացիներին։

Տեփան էմին աշխատասեր, աստվածավախ, հեզ բնավորության տեր մարդ էր, նրա տնտեսությունը բաղկանում էր ջրարբի արտից, մի էշից, մի կովից և 5 ոչխարից, որով հազիվ ծայրը ծայրին հասցնելով ապրում էր իր կնոջ և մի հատիկ զավակի՝ Գրիգորի հետ։

Տղան չափահաս էր և փափագում էր գնալ Պոլիս, դրամ շահել և օգնել ծնողացը, բայց հայրը մտածում էր կապել աղի ոտքը, որպեսզի օտարության մեջ աչքը դուրս չլիներ, մտածեր վաթանի և կնոջ մասին, և այր ու կին մտածում էին ամուսնացնել իրենց որդուն, որն արդեն 17 տարին էր թևակոխել։ Այդ մտորումների ժամանակ գտան նաև հորբրդի (պարկեշտ), հալալ կաթնակեր 15 տարեկան մի որբ հարսնացու, բարի ու գեղեցիկ։ Մտածելը հեշտ էր, բայց հարսանիքի դրամ չունեին։ Մնում էր դրամ ճարել և տղան ամուսնացնել, թեև շատ-շատերի նման նա էլ մտածում էր «էշ ծախել՝ տղան կարգել» ժողովրդական առածի մասին, բայց մի իշադիր անբավարար էր, մանավանդ որ առանց էշի իր տնտեսության գործերը խանգարվելու էին։ Վերջապես, կնոջ խորհրդով դիմում է Ազաբլարենց Օհաննեսին և ստանում 5 ոսկու ապրանք և 5 ոսկի դրամ, հարսանիքից հետո տղան Պոլիս ճամփելու և պարտքը վճարելու խոստումով։

Ամուսնությունից մի ամիս հետո տղան մեկնում է Ստամբուլ, «էրթըմ Ըստըմպոլ՝ բերեմ փարա պոլ» երազելով, և սակայն պատանի Գրիգորը շուտով հասկացավ, թե Ստամբուլի փողոցներում դրամ չեն բաժանում, որ հավաքի ու ուղարկի տուն։ Երկար թափառելուց և զրկանքների դառնությունը ճաշակելուց հետո համադյուղացիների ա-

ջակցությամբ մանում է գործի, օրական մի չերեկ (5 դուրուշ) աշխատավարձով։

Մինչև գործի մանելը պատանի Գրիգորը ընկնում է պարարի տակ, իր ստացած 5 դուրուշով ստիպված է լինում ապրել, իր մանր պարտերը վճարել և մտածել տուն դրամ ուղարկելու մասին։ Մինչ այդ Տեփան Էմու աչքերը ջուր կտրեցին Գրիգորից դրամ ստանալու ճամփան ուղասելուց։ Թեև Գրիգորը իր նամակներում խոստանում էր շուտով դրամ ուղարկել, սակայն ոչինչ չէր սաստվում։

Տեփան Էմին ճարահատ դիմում է պարտատիրոջը և խնդրում երկարաձգել պայմանաժամը։ Ագարլարը համաձայնում է, պայմանով, որ Տեփան Էմին երաշխավորության փոխարեն իր երկու ջրարբի արտերի թափան (կալվածաթուղթ) ներկայացնի իրեն և արտերը ոնհին (դրավ) դնի պարարի փոխարեն։ Հուսահատված ծերունին «սեր ներս՝ ճերմակը դուրս» անելով, համաձայնում է և արտերը գրավ դնում։

1900 թվին կնքված այդ փոխատվությունը 1903 թվի վերջերին ահռելի չափերի էր հասել։ Խեղճ Տեփան Էմու՝ ինձ գրել տված սրատուչ նամակներին որդին պատասխանում էր, թե արդեն ինքը ղրկած է 18 ոսկի և շուտով ղրկելու է ևս 2 ոսկի, այնպես որ պարարն էլ, տոկոսն էլ արդեն վճարված են լինելու, մնում էր տուն վերադառնալու ճանապարհածախսի մասին հոգալ։

Հոր խնդրանքով ստիպվեցի Գրիգորին ներկայացնել պարարի և տոկոսի հեռայալ հաշվեկշիռը, որ մինչ այդ չէին ուզում դրել, աղուն «ումուտը չկոելու» համար։

1900 թ. հունվարի 1-ին Ազարլարենց Օհաննեսից ստացված 10 ոսկի պարարի հաշվետվությունը

Ստացված փոխառության եռամյա պայմանաժամով՝ 10 ոսկի՝	1000	դր.
1 հունվարից—31 մարտի, 10 ոսկիի եռամսյա տոկոսը՝ 10 մեճ.	200	«
	1200	«
1 ապրիլի 1900 թ. մինչև 30 հունիսի 1900 թ. 12 ոսկիի տոկոս՝ 12 մեճիտ	240	«
	1440	«
1 հուլիսի 1900 թ. մինչև 30 սեպտեմբերի 1900 թ. 1440 դուրուշի հարյուրին 20 տոկոսը	288	«
	1728	«
10 օգոստոսի 1900 թ. ստացված է 2 ոսկի՝ 200 դր.		
28 սեպտեմբերի 1900 թ. ստացված է 2 ոսկի՝ 200 դր. վճարված	400	«
մնացորդ	1328	«
1 հոկտեմբերի 1900 թ.—31 դեկտեմբերի 1900 թ. 1328 դուրուշի հարյուրին 20 տոկոսը անում է	266	«
	1594	«
1 հունվարի 1901 թ. մինչև 31 մարտի 1901 թ. 1594 դր. հարյուրին 20 տոկոսը անում է	319	«
	1913	«
1 ապրիլի 1901 թ. մինչև 30 հունիսի 1901 թ. 1913 դր. հարյուրին 20 տոկոսը անում է	383	«
	2296	«
փոխադրյալ՝	2296	դր.
12 ապրիլի 1901 թ. ստացված է 3 ոսկի կամ 300 դր.		
Մոսից Ղևոնի միջոցով ստացված է 100 դր.—	400	«
	1896	«
մնացորդ		
1 հուլիսի 1901 թ. մինչև 30 սեպտ. 1901 թ. 1896 դր.	379	«
հարյուրին 20 տոկոսը անում է	2275	«
1 հոկտեմբերի 1901 թ. մինչև 31 դեկտեմբերի 1901 թ. 2275 դր.	455	«
հարյուրին 20 տոկոսը անում է	2730	«
1 հունվարի 1902 թ. մինչև 31 մարտի 1902 թ. 2730 դր.	556	«
հարյուրին 20 տոկոսը անում է	3286	«
Պեյրոից Ալոի հետ ղրկած էիր 200 դր. Էդեկաց Սիմոնին հետ՝ 200 դր., վճարված	400	«
	2886	«
մնացորդ		
1 ապրիլի 1902 թ. մինչև 30 հունիսի 1902 թ. 2886 դր.	577	«
հարյուրին 20 տոկոսը անում է	3463	«
1 հուլիսի 1902 թ. մինչև 30 սեպտեմբերի 1902 թ. 3463 դր.	693	«
հարյուրին 20 տոկոսը անում է	4156	«
1 հոկտեմբերի 1902 թ. մինչև 31 դեկտեմբերի 1902 թ. 4156 դր.	831	«
հարյուրին 20 տոկոսը անում է	4987	«
1 հունվարի 1903 թ. մինչև 31 մարտի 1903 թ. 4987 դր.	979	«
հարյուրին 20 տոկոսը անում է	5966	«
փոխադրյալ	5966	դր.
Քաբրից Սլոյի միջոցով ստացված է 1 ոսկի՝ 100 դր.		
Քափոյից Պեռոսի տղուն՝ Աբելի միջոցով 1 ոսկի՝ 100 դր.	200	«
մնացորդ	5766	«
1 ապրիլի 1903 թ. մինչև 30 հունիսի 1903 թ. 5766 դր.	1153	«
20 տոկոսը անում է	6919	«

1 Հուլիսի 1903 թ. մինչև 30 սեպտեմբերի 1903 թ. 6919 ղր.	1384 «
	8303 «
20 տոկոսը անում է	
Օգոստոսի 23-ին փոլիցաՀին միջոցով ղրկված 2 ոսկին այստեղ սացվեց 28 սեպտեմբերին, այնպես որ այլևս փոլիցաՀիի միջոցով դրամ մի ուղարկիր.	200 «
	8093 «
1 Հոկտեմբերի 1903 թ. մինչև 31 դեկտեմբերի 1903 թ. 8093 ղր.	
20 տոկոսը անում է	1619 «
Ընդհանուրը՝	9712 «

1904 թվականի Հունվարի 6-ի ծնունդի օրը Գրիգորին ուղարկված այս հաշվեկշռից և բացասական նամակից հետո ոչ միայն պարտքը չէր վճարված, այլ պարտքի գումարը հասած էր 97 ոսկու և 12 ղուրուշի։ Գրիգորից այլևս նամակ չստացվեց, նույնիսկ չուղարկեց այն 2 ոսկին, որ խոստացել էր շուտով ուղարկել։

Հոր դրած բոլոր նամակները մնացին անպատասխան, Պոլսից վերադարձող համազյուղացիները հայտնեցին, թե Գրիգորը Պոլսում չէ և ոչ ոք տեղեկություն չունի, թե ուր է փախել։

Վաշխառուն աՀուրդով ծախել տվեց Տեփան էմու տունը, անասունները և երկու ջրարբի արտը, որոնք արժեցին 5618 ղուրուշ։

Արտերը գնեց Խալիլ աղան, որոնց աչք դրած էր, անասունները բաժին ընկան Ազաբլարին, բայց պարտքը չվճարվեց, միայն աղայի «բարեհոգության» շնորհիվ թույլ արվեց Տեփան էմուն, որ առանց վարձի իր տանը ապրի, մինչև ուղայից մի լուր ստացվի։

Տեփան էմին դարձավ նախրապան և գյուղի նախիրն էր արածում. անխիղճ վաշխառուն սպառնում էր նրան տնից դուրս վտարել, եթե տարեկան մի որոշ գումար պարտքի դիմաց չվճարեր, և ահա մի օր Տեփան էմին իր կնոջ, Հարսի ու թոռնիկի հետ գյուղից անհետ կորավ։

Այսպես անսպասելիորեն, երբ կորուսյալ այս ընտանիքին հանդիպեցի Հովիվ Զեյնալի մոտ և երբ շփոթի ու հուզման պահերը անցան ու փոքրիկ Տիգրանին տեսա այդքան մեծացած, առաջին հարցումս եղավ.

— Տեփան էմի, ինչո՞ւ առանց մեզի լուր տալու գյուղից փախար։

— Ամեն հեռ աղային և Ազաբլարին ասթ գալուս սաղ ճանս դող ինար կը, ըս մեհսումիս թոզ տղոթին, օր բա շները շան սատակ չարեցի, ընուց սֆաթը չաեյնալու համար էկա իմ աղբոր քով։

— Գրիգորից ինչ լուր։

— Գիրգորս սաղ-սալամաթ ա, գեղը էղած վախտս Ռուստամանի Յալթա քաղաքից սիլաՀի էկավ, ընտուց իմացա քի Գիրգորս մըր ըն գիրը առած օր ոչօքի բան-ման չսած, իզը-թոզը կորցընելու համար Ըստըմպուլից փախել Յալթա քաղաքը գործի կպեր է, ըս սիլաՀին գողտուկ ըսըց քի ինք կինէ Յալթա էրթը պըտը, ես ըլ տեղս կորցընելու համար էկա Զեյնոյին քով, օր Գիրգորիս հլա գողտուկ գիր տամ-առնըմ։

— Ինչպես ապրիք կը։

— Ողջ ըլի իմ աղբերը, իրար հետ բանինք-դասինք, իրար հետ ուտինք կը։

Խոսակցությունից պարզվեց, որ Տեփան էմին, վախենալով իր տղայից ստացվելիք դրամը ձեռքից կորցնել և մյուս կողմից որդու բնակավայրը պարտատիրոջից թաքցնելու համար ընտանյոք տեղափոխվել է Դերսիմ և խաղաղությամբ ապրում է Զեյնալի մոտ, հույս ունենալով, որ մի երկու տարուց իրենք ևս կգնան Յալթա։

Այսպես վաշխառու Ազաբլարենց Օհաննեսը 10 ոսկի փոխառության դիմաց ստանալով 18 ոսկի, դեռ պահանջում էր 9712 ղուրուշ, իսկ ստացվածքի և անասունների վաճառքից ստացել էր 5618 ղուրուշ։ Տեփան էմին պարտական էր մնացել 40 ոսկի 94 ղուրուշ (4094 ղուրուշ), որը պատճառ դարձավ ընտանիքի քայքայման, նոր ամուսնացած ղույգի կործանման և 12 տարեկան Տիգրանի որբացման։

Տարիներ հետո տեղեկացա, որ Գրիգորը հայկական ջարդերից հետո Յալթայում ամուսնացել է, իսկ Տեփան էմուց և իր ընտանիքից լուներ ոչ մի լուր։

Վաշխառությունն ավելի մեծ ավերներ էր գործում Դերջանի շրջանում։ Դերջանը որպես երկրագործական շրջան և որպես արմտիքի ի մասնավորի ցորենի արտադրության շտեմարան և արտահանման կենտրոն, գտնվում էր վաշխառուների ազդեցության տակ։

Վերը նկարագրված վաշխառու Ազաբլարենց Օհաննեսի և Տեփան էմու պարագան համեմատած Դերջանի և Զարսանջակի բեկերի չարաշահություններին, կեղեքումներին ու կողոպուտներին կարելի է համարել մանրանկար վաշխառության մի պատկեր։ Պատահել են շատ դեպքեր, երբ վաշխառուից կործանված ընտանիքի հուսահատած անդամներից մեկը կամ մի քանիսը կրակի են ավել վաշխառուի բնակարանը, սպանել վաշխառուին և ապաստանել Դերսիմում։ Դերսիմցին գրկաբաց դիմավորում և հովանավորում էր այն

13—61

քաջերին, որոնք արիաբար մարտնչում էին կողոպտիչների և բռնակալների դեմ։

Անդրադառնալով առևտրին, հարկ է նշել, որ լեռնաշխարհի գյուղերում խանութներ չկային և ոչ էլ գյուղամիջյան տոնավաճառներ կամ շաբաթական շուկայի օրեր։ Տոնավաճառներ լինում էին առավելապես կենտրոնական մեծ քաղաքներում, իսկ բազարի օրեր՝ շրջկենտրոններում։ Բազարի գլխավոր օրը ուրբաթն էր (ճումա պազարի), կար և երեքշաբթի (սալի պազարի)։

Ուրբաթ օրվա բազարներում վաճառվում կամ փոխանակվում էին առավելապես սննդամթերք, գորգեր, կապերտներ, ճեճիմներ և կաթնամթերք (յուղ, չոր սեր, պանիր և այլն)։ Շրջկենտրոնների շրջակա գյուղերից բազար էին բերում փոխանակելու նաև փայտեղեն պիտույքներ, նույնպես և մեղր, մանանա և այլն, փոխարենը ստանալու թեղեն, կտավեղեն, մանուսա, գութնի, ցերձան, ասեղ, ուլունք, խըմա, գազ (նավթ), շաքար և այլ պիտույքներ։

Երեքշաբթվա շուկան (սալի պազար) կենդանիների, մորթեղենի և բրդի հատուկ առ ու ծախի օր էր։ Եթե «ճումա պազարին» մանր առևտրականների և չարչիների ազդեցության տակ էր, ապա «սալի պազարիի» տիրապետողները անասնավաճառներն (ճամպազ) էին։

Ճամպազները թեև գործում էին անհատական հիմունքով, ամեն մեկն իր հաշվին, բայց ճամպազությունը (գտնվում էր առավելապես թուրքերի ձեռքին) կազմակերպված առևտրական մի ձև էր։ Ճամպազները նախօրոք իրար մեջ համաձայնում էին այդ շաբաթվա բազարում ով ինչ գնելիքն ու ծախելիքը և բազարի օրը արևածագից առաջ բռնում շրջկենտրոն մտնող բոլոր արահետների անցքերն ու աշխատում էժան գներով ձեռք ձգել կենդանիներ, հետո բազարում ավելի սուղ ծախելու համար։ Ճամպազության մի ուրիշ ճյուղն էլ մատրապազությունն էր։ Ճամպազն ու մատրապազը իրար օգնող, գյուղացու ծախած ապրանքը վարկաբեկող միջնորդի դեր կատարողներն էին։

Մատրապազների և ճամպազների հալածանքից զերծ մնալու համար գյուղացին ստիպված էր լինում կենդանիները էժան գնով տալ ճամպազին, լավագույն դեպքում, վայելելու համար մատրապազի հովանավորությունը, նախապես խոստանում էր որոշ տոկոս վճարել նրան, եթե կարենար իր նախատեսած գնով վաճառել կենդանին։

Կային ճամպազներ և մատրապազներ, որոնք համախորհուրդ որոշում էին այդ օրը կենդանիներ չգնել, իսկ անհատ գնորդների ականջին «բարեկամաբար» փսփսալ վաճառվելիք կենդանու թերությունները։

Նման պարագաներում, երբ անհատ գնորդը մոտենում էր որևէ ձիու, ջորու, էշի, կովի, եզի կամ ոչխարի տիրոջ և հետաքրքրվում վաճառման գնով, նույն պահին հայտնվում էր ճամպազը որպես գնորդ և մոտենալով անասունին, նախ բռնում ատամները, ապա ձեռքը դնում մեջքին, նայում աչքերին, շոշափում կուրծքը, փորը և կողերը, ապա դառնալով վաճառողին, հարցնում գինը։

Վաճառողը անտեղյակ գնորդի մտադրությունից, հայտնում էր իր գինը, իսկ կեղծ գնորդը դիտել տալով, թե այդ անասունը քեփեննեկ է (թոքատապ) կարճատև, ծերացած, նիհար է և այլն, առաջարկում էր առաջարկված գնի 25 տոկոսը և ավելացնում.

Ով որ նայի, ով որ ղնել ուզի, իմ ասած գնից մեկ փարա ավելի չտար, ապա թողնում հեռանում էր։ Երկրորդ գնորդը, որ ծանոթացավ «մասնագետի» քննության արդյունքներին և տեղեկացավ առաջարկված գնին, նույնպես հեռանում էր։ Պարագան նույնն էր բոլոր գնորդների և վաճառողների համար։

Երբ կալմեջր վերջանում, գնորդներից շատերը հեռանում էին, վաճառողը անասունին ետ տանելու մղձավանջից սարսափած, ստիպված էր լինում զիջել գները։ Հենց այդ ժամանակ հրապարակ էին գալիս մատրապազ գնորդները, որոնք ճամպազների միջնորդությամբ գելխեղդ էին անում վաճառողին և կես-գնով վերցնում կենդանիները, հաջորդ բազարում եռապատիկ գներով ծախելու համար։

Իսկ երբ վաճառողը գյուղացու հագուստով ներկայացող մատրապազն էր, արդեն առաջին հերթին մոտենում էր ճամպազը և իր մասնագիտական քննությունը կատարելուց հետո բացականչում. «մաշալլահ, մաշալլահ, լավ խնամված երիտասարդ անասուն է, հայտնի է, որ ճինսը լավ է»։ Հրապարակով իր գնահատականը տալուց հետո հարցնում էր գինը։ Վաճառողը տալիս էր նախապես որոշված մի գին, ասենք՝ 5 ոսկի, ճամպազը սուղ էր գտնում այդ գինը և առաջարկում 4 ոսկի գնվելիք ձիու համար, որը ռեհվանի կամ յորղա քայլվածք և մի շարք այլ բարեմասնություններ ուներ։ Վաճառողը կտրականապես մերժում էր, ասելով, թե քիչ առաջ 4 ոսկի և մի մեջիտ տվողներ եղան, բայց ինքը չտվեց։

Գնորդները լսում էին այս բոլորը և տպավորվում, մինչդեռ ճամպազը արդեն հեռացել էր ուրիշ վաճառողի մոտ նույն խաղը կրկնելու։

Կարելի է ասել, թե առանց ճամպազների և մատրապազների սահմանված տուրքը վճարելու բազարում ապրանք ծախել կամ գնել հնարավոր չէր։

Այս առիթով պատմեմ ժողովրդի մեջ առակի կարգ անցած իրական մի դեպք։



Նկ. 20. Կշեռք։ 1. բռնակ, 2. թաթ։

Խնձորեկում իր աչքարացությամբ ու ճարպկությամբ հայտնի Մստոյից Իսմայիլը որոշում է իր ամենալավ կովերից մեկը վաճառքի տանել։ Ավելի փորձառուները խորհուրդ են տալիս Իսմայիլին, որ կովը վաճառի մատրապազների միջոցով և տալիս են որոշ հասցեներ, բայց Իսմայիլը վըստահ իր ուժերին, արհամարհելով տրված խորհուրդները, կովը տանում է շրջկենտրոն։

Մոտենում է միանջին, քննում կովը, գտնում անթերի և առաջարկում իր միջնորդությունը կովը լավ գնով ծախելու, Իսմայիլը քաջալերված առաջին հանդիպածի գնահատականից, մտքում ծիծաղելով միջնորդի, նույնիսկ գյուղում իրեն խորհուրդ տվողների վրա, ոչ միայն մերժում է միանջիի առաջարկը, այլ ավելի սուղ գին է պահանջում։

Գալիս է երկրորդը, երրորդը, տարբեր տարազներով ղանազան մարդիկ, բոլորն էլ որպես գնորդներ, որոնք արդեն տեղյակ լին միանջիի դիմումի մերժումին, քննում, զննում են ատամները և ամեն մեկը իր կարգին մի թերություն կամ հիվանդություն գտնելով, հեռանում են։

— Էհ, աս ալ կով է, որ վաճառում ես, բերանը ատամ չունի, լեզվին տակ բշտիկներ կան, կճղակներում՝ ապաղի հետքեր։

Այսպիսով, վարկաբեկված կովը մի քանի անգամ բազար տարվելուց հետո և գուցե հարյուրավոր անգամներ նայելու համար բերանը բաց անելու ու լեզուն դուրս հանելու վարժված, մնում է անվաճառ։

Ես երբ հորթարած էի և երեխաների հետ պատահմամբ մոտենում էինք Մստոյից կովին, նա դեռ հեռվից վերի շուրթը վեր ցցած, լեզուն դուրս էր հանում և ատամները ցուցադրում։

Երկար տարիներ գյուղում առակի կարգ անցած այս դեպքը առիթ տված էր, որ երբ մեկը սովորականից ավելի բերանը բաց էր անում և ատամները երևում էին, ասում էին.

— Մստոյից կովուն պես ինչու բերանդ բաց, ակռներդ ցույց կտաս։

Այսպես էր վիճակը բազարներում տեղի ունեցած վաճառքի բնագավառում, ուր տիրապետում էին ճամպազը, մատրապազը և միանջին (միջնորդ)։

Անկախ Խոզաթի, Բերկրիի, Բալուի, Քղիի, Բոլոմորիի և համանման մյուս շրջկենտրոններում տեղի ունեցած ճումա կամ սալի բազարներում տեղի ունեցած համախառն առևտրից, ամենաբազմամարդ և հետաքրքիր բազարը տեղի էր ունենում Արածանիի աջափնյա Բերդակ ավանում։

Բերդակի աշխարհագրական դիրքը և Խարբերդի կենտրոնին մոտիկությունը, հնարավորություն լին տալիս Դերսիմի ամեն կողմերից հավաքվել Բերդակի ճումա բազարին, որը երբեմն տոնավաճառի տեսք ու բնույթ էր ստանում։ Խարբերդից, Խոզաթից, Չարսանջակից և Բալուից Բերդակ էին գալիս արհեստավորներ, խանութպաններ, չարչիներ, տնայնագործներ, գինեվաճառներ, ճամպազներ, մատրապազներ և միանջիներ։ Նույնիսկ հեռավոր գյուղերից Բերդակ էին գալիս հովիվներ, փայտամշակներ, կտավագործներ, ամեն ասպարեզի և դասակարգի մարդիկ, գնորդներ ու վաճառողներ։ Բազարի ծավալուն հրապարակը ողողված էր լինում ամեն տեսակ ապրանքով։ Գյուղացին իր արտադրությունը, քաղաքացին իր ստեղծագործությունը կամ պատրաստած իրերն ու առարկաներն էր ցուցադրում։

Առևտուրը կամ փոխանակությունը սկսվում էր վաղ առավոտից։ Հինգշաբթի կեսօրից հետո Բերդակ էին հասնում և կարգ դնում վաճառքի ապրանքները, վերջապես ընդհանուր աղաղակի, գոռում-գոչումի, նույնիսկ ծեծի ու կռվի մթնոլորտում առևտուրը և փոխանակությունը շարունակվում էր մինչև իրիկուն, հաճախ վերջանում արյունահեղությամբ։

Պետք է ասել, թե թուրքերը առհասարակ արհամարհում էին քրդերին և որպես տիրապետող ազգ անարգում, հալածում ու վիրավորում էին քրդերի ազգային արժանապատվությունը։ Իսկ քրդերը անհանդուրժող էին, թույլ չէին տալիս ոչ

որի, որ վիրավորեն իրենց արժանապատվությունը և ահա լեզվի կռիվը փոխվում էր զինամարտի, «Հավարև յա, հավարև» օգնության կանչին։ Հասնում էին զինված քրդեր, պատյանից մերկացվում էին սրերը, ծխում էր շեշխանեն, զարկում էին թրերը. դանակները, և ծայր էր տալիս փախեփախը։ Բազարը ամայանում էր, մնացած իրերը կողոպտվում, տասնյակ թուրք դիակների վրայից կոխկրտելով անցնում էին սադրիչները և բարձրանում Բովնատի սարը։ Քրդերի հեռանալուց հետո իրենց թաքստոցներից դուրս էին գալիս կարգը պահպանելուն սահմանված մի տասնյակ ժանդարմներ և դեպքի մասին հեռագրում Խարբերդ կամ Խոզաթ։

Բազարները տեղի էին ունենում ապրիլ ամսից մինչև հոկտեմբերի վերջերը։ Ձմռան հինգ ամիսներին դադարում էր ամեն երթևեկություն, ձյան հաստ խավը ծածկում էր սար ու ձոր և կղզիացնում լեռնաշխարհը արտաքին աշխարհից։

ՀԱՇԻՎ ԵՎ ՉԱՓԵՐ

Աշխարհից կտրված և ինքն իր սահմաններում կղզիացած լեռնաշխարհի բնակչությունը գործ չուներ մեծ թվերով հաշիվների հետ, հաշվարկման թվերը սահմանափակ էին։

Խուրձերի, խորոմների, ձվի, ընկույզի հաշվումները կատարում էին բարդ-երով։ «Բարդ մի խոտ, բարդ մի հավկիթ, բարդ մի ընկույզ» և այլն։ Բարդը 30 խուրձ կամ խորոմ կազմող դեզն էր։

Հնուց ի վեր ավանդաբար պահվում էր իրեք (երեք) և օխթ (յոթ) թվերի նախապատվությունը։ Կռիվների, խրախճանքի, հավարի և այլ առիթներով օգտագործում էին «իրեք հեղ նշան տալ», «իրեք հեղ օխտը», նույնիսկ հայհոյանքի կամ օրհնության ժամանակ գործածում էին «օխտը պապուտ...» կամ «անված օղորմի օխտը պապուտ հոգուն» դարձվածքները։ Այդ սովորությունը ընդհանուր էր թե հայերի, թե քրդերի համար, բացառյալ հայերի մեջ ամուսնության հասի և չըհասի ազգակցական կապի, որ հաշվում էին «օխտը պորտ»։ Քրդերը այդ հաշվումը չունեին։

Բարդի սահմանդրյալ թվերը 30-ի մեջ բաժանելի բոլոր թվերն էին՝ չուխա, իրեք, հինգ։ Այդ թվերով կատարում էին հաշվումները, մինչև որ հասնեին բարդին, որը այլևս դառնում էր միավոր։

Ավելի մեծ թվերով հաշվումներ կատարելու ժամանակ դիմում էին համրիչի (տերողորմյա) հատիկների օգնությանը, որոնք չգիտես ինչու անպայման կազմված էին լինելու 33, 49 և կամ 99 հատից։ 33 հատ կրող ամեն մի համրիչի հատիկը միավոր էր, եթե հատերն էին հաշվում, ամբողջը բարդ էր, եթե բարդերն էին հաշվում։ 49 հատիկ ունեցող համրիչը իր գլխի միացնող հատիկով դառնում էր 50 հատ, որի ամեն մի հատիկը տասնավոր էր, 50 հատիկը հավասար էր 500-ի։

Հաշվական նախնական այս ձևում գլխավոր դերը վերապահված էր երրորդ տեսակի համրիչին, որի 99 հատիկներից ամեն մի հատիկը հարյուրավորի դեր էր կատարում, իսկ համրիչի երկու ծայրերը միացնող ավելի երկար կամ համաչափ ավելացնելով 99-ին, համազոր էր 10,000-ի։

Կաթնափոխատվության ժամանակ (խապ) հաշվումները կատարում էին վերից վար ուղղահայաց ձևով հավասար մասերի բաժանված փայտե գավազանի վրա կատարված նշումներով՝ Ենր: Գավազանի կեսը մնում էր փոխ տվողի մոտ, մյուս կեսը՝ փոխ առնողի մոտ։ Ջափը բառդան, սեռնիճ կամ փոքր փարչ էր, վերադարձնելու պարտքային ջնջում էին երկու մասերի միացյալ քեռթը։

Ավելի փոքր հաշվումները կատարում էին ձեռքի մատներով։ Մի ձեռքի չորս մատը իրենց ստորաբաժանումներով՝ խազերով, հավասար էին 12 համրանքի և կամ մի դյուժինի։ Երկու ձեռքի տասը մատը մի բարդ էր, մի ձեռքը՝ կես բարդ։

Կային գյուղեր, որ փոխանակ ասելու տասը, քսան, երեսուն, ասում էին՝ մեկ տաս, երկու տաս, երեք տաս և այլն։

Նույն ձևով էին հաշվում նաև քրդերը. Նմուշի համար արձանագրենք նաև քրդական թվերը իրենց գործածական անուններով։ 1-ժու, 2-դուէ, 3-հիրև, 4-չար, 5-բանճ, 6-շեշ, 7-հավթ, 8-հեշտ, 9-նեվ, 10-տես, և հայերի նման տասի վրա ավելացնելով մեկը, հաշվում էին մինչև 20-վիշտ. 30-հիրիս, 40-չեվրես, 50-բանչաս, 60-շեշտա, 70-հավթա, 80-հեշտա, 90-նեվա, 100-սե, 1000-հազար։

Այս կարգաթվերը ունենալով հանդերձ, կային գյուղեր, որ փոխանակ «վիշտ» ասելու, որ նշանակում է 20, հայերի նման ասում էին տրան տես. Հիրե տես-երեք տասը (30), բայց երբ կարգով համրում էին, չէին ասում՝ հիրե տես ու ժու, հիրե տես ու տրան, հիրե տես ու հիրե, այլ ասում էին ուղիղ՝ հիրիս ու ժու, հիրիս ու տրան, հիրիս ու հիրե, այսինքն՝ երեսուն և մեկ, երեսուն և երկու, երեսուն և երեք և այլն։

Լեռնաշխարհի մի շարք գյուղերում, ուր դրելկարգացողներ չկային, եթե համրանքը, գումարու-